

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԱԿADEMİЯ NAUK ARMENSKOY SSSR
MIKROBIOLOGICHESKIJ SBORNIK

ՊՐՈՎ. II

1946

ՎԱՐ. II

ՔԱՐԴԱՑԱՆ Ռ. Ա.

ԴՐՈԺԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾՂՈՏԻ ՔԻՄԻԱԿԱՆ
ԿԱԶՄԻ ՎՐԱ

Գյուղատնտեսական կենդանիների աճման ու զարգացման համար, ինչպես հայտնի է, խոշոր նշանակություն ունի կերի բաղան, նրա տեսակային կազմը, որակը, ինչպես նաև կերի ռացիոնալ օգտագործումը: Փորձերի հետևանքով պարզվել է, որ կերերի գրոժացման շնորհիվ անասնակերի կերա-արժեքը և կենդանիների մթերատվությունը զգալիորեն բարձրանում է (1, 2, 3, 4) և դրա համար էլ կերերի գրոժացման պրոցեսը, որպես նոր մեթոդ, արգեն շատ հիմնարկներում օկսվել է մասսայուրեն կիրառվել: Սակայն այդ ձևով կերի բիոլոգիապես նախապատրաստման մի շարք կողմեր գեռ պարզված չեն, ինչպես, օրինակ, կերի քիմիական կազմի մեջ առաջացած փոփոխությունները և այլն:

Այդ տեսակետից էլ անհրաժեշտ էր կերերի գրոժացման դրական ազդեցությունն արժեքավորելու: Համար, նաև որոշել, թե կերը ինչպիսի քիմիական փոփոխության է ենթարկվում: Ենթերով գրանից Միկրոբիոլոգիական սեկտորը գարմանի գրոժացմանը զուգընթաց հետազոտել է նաև կերի մեջ տեղի ունեցող քիմիական փոփոխությունները:

Հայտնի է, որ գյուղատնտեսության մեջ եղած մի շարք կերերից՝ մի քանիս իրենց կերային արժեքով գյուղատնտեսական կենդանիների զարգացման վրա առանձնապես զգալի դեր չեն խաղում: Այդպիսի կերերից մեկն էլ ծղոտն է: Նա համարվում է կոշտ ու կոպիտ, սննդանյութերով, աղքատ կեր, և դրա համար էլ նա, որպես սննդանյութ, կենդանիների վրա առանձնապես զգալի ազդեցություն չի գործում: Դրա պատճառներից մեկը և զլատավորը՝ ծղոտի մեջ գերակշռող թաղանթանյութն է, որը, ինչպես հայտնի է, կենդանու ստամոքսում մարսման պրոցեսում, շատ դժվար է քայլայվում և թույլ մարսելիություն ունի:

Մղոտը զյուրաժարս դարձնելու համար, մեզ մոտ կազմակերպված դրոժացման փորձերը զգալի արդյունքներ ավելցնեն (5, 6):

Պարզվեց, որ գարմանի դրոժացման ժամանակ, շաքարանկերի արագ գործունեության շնորհիվ, դարձանի ածխաջրատները խիստ ձևափոխման են մնթարկվում. կերը օժովում է դռւրեկան համ ու հոտով և այնպիսի յուրահատուկ հատկություններով, որպահ նախ՝ բարձրացնում են կերի սննդարժեքը և ապա՝ կենդանիների մթերատվությունը:

Մղոտի դրոժացման ժամանակ, նրա քիմիական կազմում աեղի ունեցող փոփոխություններն ուսումնասիրելիս հետազոտվել է դրոժացված ծղոտ և ծղոտ առանց դրոժների:

Մղոտի դրոժացման համար օգտագործվել է Torula utilis -ը: Դրոժների զարգացման համար ծղոտին ավելացվել է 1% շաքար, 1% ամոնիում սուլֆատ և 1% սուլֆերֆուրֆատ:

Փորձի վերջում (նախքան կերակրելը) որոշվել է կերի քիմիական կազմը, քիմիական անալիզների արդյունքներն ամփոփված են և 1 աղյուսակում:

Խերի մեջ բացարձակ չոր նյուրեր 0%-ով

Խ 1 աղյուսակ

Խ 1	Կ Ե Ր Ե Ր	Հ Ա Ր Ա Բ Ի Ն Կ Ե Ր Ե Ր	Հ Ա Ր Ա Բ Ի Ն Կ Ե Ր Ե Ր	Ա Ր Ա Բ Ի Ն Կ Ե Ր Ե Ր	Մ Ա Ր Ա Բ Ի Ն Կ Ե Ր Ե Ր	Ա Ր Ա Բ Ի Ն Կ Ե Ր Ե Ր	Մ Ա Ր Ա Բ Ի Ն Կ Ե Ր Ե Ր
1	Դրոժացված ծղոտ Torula utilis, 1%/ շաքար, 1% սուլֆա- տիում, 1% ամո- նիում սուլֆատ	4,57	7,50	7,14	11,57	1,24	40,96
2	Զգրոժացված ծղոտ (կոնտրոլ)	4,15	3,51	2,93	7,66	0,94	48,06

Ինչպես տեսնում ենք վերը բերված թվական տվյալներից, դրոժացված ծղոտի մեջ, կոնտրոլի հետ համեմատած, ավելացնում է հում պրոտեինի և սպիտակուցի 0%-ը, և ընդհակառակ՝ պակասում է թաղանթանյութի 0%-ը: Այդ նշանակում է, որ թաղանթանյութի մի մասը շաքարասունկերի և բակտերիաների

կենսական պրոցեսներում հիգրոլիզվելով վեր են ածվում հեշտ լուծվող ածխաջրատների, իսկ վերջինիս մի մասն էլ ամոնիումի աղերի հետ սինթեզվելով՝ տալիս է ազոտային միացություններ:

Դրոժացման ժամանակ հում պրոտեինի և սպիտակուցի քանակի ավելացումը նույնական տեղի է ունենալու հիշյալ միկրոբների զարգացման շնորհիվ: Այդ պրոցեսի ժամանակ նաև աննշան չափով ավելանում է ճարսի և մոխրի քանակը:

Աղյուսակի տվյալներից երևում է նաև, որ չոր նյութերի քանակը պակասում է, իսկ այդ պետք է բացատրել միկրոբների կենսագործունենության ժամանակ լուծվող ածխաջրատների արագ ձևափոխմամբ, այսինքն՝ սպիրտի և ածխաթթվային գաղի (CO₂) գոյացմամբ, մասնավորապես՝ ածխաթթու գաղի առաջացմամբ: Դրանց շնորհիվ չոր նյութերի կորուստը զգալիորեն մեծանում է: Մղոնը, բացի Torula utilis-ով դրոժացվելուց, զըստացվել է, նաև, միկրոբիոլոգիական սեկտորի կողմից մեկուսացված, Torulopsis armeniaca-ով (Սարուխանյան Փ. Գ.):

Վերջինով զրոժացնելիս կերի մեջ տեղի ունեցող քիմիական վորոխությունները նույնականացվել ենք առել:

Փորձի ընթացքում հաշվի է առնվել ջրի և ծղոտի հարաբերությունը:

Ծղոտի և ջրի հարաբերությունը եղել է 1:2: Այս փորձում զաքարը փոխարինվել է ճակնդեղի մանրունքով: Փորձնունեցել է հետեւյալ վարիանտները:

1. Ծղոտ՝ 10 կգ, մանրացված ճակնդեղ՝ 10 կգ, ջուր 20 լիտր, 0,5 %₀ սունիում սուլֆատ՝ 100 գր, 0,5 %₀ սուպերֆոսֆատ՝ 100 գր և Torula utilis 0,6 գր:

2. Նույն է, միայն Torula utilis-ը փոխարինված է Torulopsis armeniaca-ով:

3. Նույն է, ինչպես առաջին վարիանտը, միայն առանց հանքային նյութերի:

4. Ծղոտ, առանց շաքարամիկերի (կոնտրոլ):

Այս փորձերում տեղի ունեցող բիոքիմիական պրոցեսների արդյունքները ամփոփված են և 2 աղյուսակում:

Ինչպես տեսնում ենք, 1, 2 և 3 վարիանտների կերերի քիմիական կազմի մեջ առանձնապես մեծ տարբերություն չի նկատվում: Միայն մոխրի 0,5-ը 1-2-րդ վարիանտների մեջ որոշ չափով բարձր է, իսկ 3-րդ վարիանտում ընդհակառակ ցածր

Անդր մեջ քացարձուկ չոր օլուրիր ٪/ով

Սպառուկ Ա 2

Տ Ա Խ Բ Հ	Կ Ե Բ Ե Բ	Ը Ն Հ Ա Ն Ո Ւ Թ Լ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ	Հ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ	Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ	Մ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ	Հ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ	Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ	
1	Ծղոտ 10 կգ., ճականդեղ 10 կգ., ջուր 20 լիտր ամսնիում սուլֆատ. 100 գր. 0,5 ٪/ո, սուլփերֆոն- ատ 100 գր. 0,5 ٪/ո, Tutilis 0,6 դր.	72—28	8,18	7,10	11,72	1,70	40,42	37,98
2	Ծղոտ 10 կգ., ճականդեղ 10 կգ., ջուր 20 լիտր, ամսնիում սուլֆատ 100 գր. 0,5 ٪/ո, սուլփերֆոն- ատ 100 գր. 0,5 ٪/ո, Toru- lopsis armeniaca 0,6 դր.	69,92	8,09	7,01	11,51	1,50	40,18	38,72
3	Ծղոտ 10 կգ.—ճականդեղ 10 կգ., ջուր 20 լիտր, Tutiisis:	70,01	8,36	6,60	9,45	1,75	40,55	29,89
4	Ծղոտ չլըսութեած (կոնտըլ)	11,17	5,43	5,08	8,05	1,27	44,44	40,81

Է: Այդ պետք է բացատրել նրանով, որ շաքարասնկերի կողմից 1 և 2-րդ վարիանտներում, ավելացրած հանգային նյութերից միայն մի մասն է օգտագործվել, իսկ մնացածով ավելացել է մոխրի տոկոսը: Այն ինչ 3-րդ վարիանտի մեջ, չնայած հանգային նյութեր չեն ավելացվել, սակայն այստեղ մոխրի ٪/ում, կոնտըլի հետ համեմատած, ավելի է, դա էլ շաքարասնկերի զարգացման հետևանք է: Եթե երեք վարիանտների կերերի կազմը եղել է նույնը, բացառությամբ զլոժային շտամերի՝ (1 և 3 վարիանտներում Torula utilis, իսկ 2-ին Torulopsis armeniaca), սակայն թիմիական անալիզների արդյունքները համարյա համառան են:

Հիմնական կերերի երեք խումբը, կոնտըլի հետ համեմատած, նկատվում է հում պրոտեինի և մաքուր սպիտակուցի-

որու քանակի ավելացում, շատ քիչ չափով ավելացում է նկատվում նաև ճարպի և մոխրի քանակի վերաբերմամբ:

Մինչդեռ թաղանթանյութը պակասում է, քիչ քանակով նվազում է նկատվում նաև այլ անաղոտ էքստրակտային նյութերի մոտ:

Ամփոփելով վերոհիշյալ դիտողությունները կարող ենք ասել, որ՝

1. Torula utilis-ով և Torulpsis armeniaca-ով ծղություններին ստացվում են համարյա նույն արդյունքները:

2. Ծղութիւնը դրամացան հետևանքով հում պրոտեինի սպիտակուցի, ճարպի և մոխրի քանակն ավելանում է և ընդհակակառակ՝ թաղանթանյութը և այլ անաղոտ էքստրակտային նյութերը պակասում են:

3. Աժխաջրատների մի մասը, շնորհիվ միկրոբների կենսական պրոցեսների, քայլայլում են և վեր են ածվում օրդանական թթուների ու յնդոզ նյութերի, և դրա հետևանքով պակասում է չոր նյութերի քանակը:

4. Հանքային նյութերի և ածխաջրատների ձևավոխությունից առաջնում են այնպիսի սպիտակուցային միացությաներ, որոնք բարձրացնում են ծղութիւնը կերարմեքը:

Գ. Բ. Կ. Վ. Ն. Ա. Խ. Թ. Յ. Ա. Կ.

1. В. П., Груздецко, И. А. Полищук.—Потери и накопление белка при дрожжевании свеклы в смеси в резаной соломой и люцерной. Проблемы животноводства, 1936 г. № 12.
2. Р. В., Говартовский.—Дрожжи в корм с.-х. животных. Проблемы животноводства 1934 г. № 6.
3. С. К. Карапетян.—Влияние дрожжевания на биохимический состав корма, его перевариваемость и некоторые физиологические функции животного, АрмФАН, 1989 г.
4. Б. Г. Левитский—Производственная эффективность дрожжевания кормов в свиноводстве. Труды ВАСХНИЛ в. XXVIII, 4. 1937 г.
5. С. К. Карапетян, А. К. Павсян, Ф. Г. Саруханян, М. И. Гукасян,—О дрожжевании соломы и производстве кормовых дрожжей (АрмФАН, Микробиологический сборник, 1943 г.).
6. С. К. Карапетян, А. К. Павсян, Ф. Г. Саруханян, М. Н. Гукасян,—Влияние дрожжеванной соломы на продуктивность животных (АрмФАН, Микробиологический сборник, 1943 г.).

Р. С. Каримян

Влияние дрожжевания на химический состав соломы

Резюме

С целью повышения питательной ценности соломы, нами были поставлены опыты по дрожжеванию соломы с *Torula utilis* и *Torulopsis armeniaca*.

1.—Результаты опытов показали, что при дрожжевании соломы с *Torula utilis* с добавлением 1% сахара, 1% суперфосфата и 1% сернокислого аммония уменьшается клетчатка и другие безазотистые экстрактивные вещества, и, наоборот, увеличивается процент протеина, белка, жира и золы.

2.—При дрожжевании соломы *Torulopsis armeniaca* и *Torula utilis* с добавлением свеклы, 0,5 %, суперфосфата, 0,5 %, сернокислого аммония, происходят одинаковые химические изменения.

3.—При дрожжевании соломы с *Torula utilis* совместно со свеклой, но без применения химикатов, получены те же результаты, как и при употреблении химикатов.

By Karimian R. S.

The Influence of the Yeasts on the Biochemical Composition of the Straw

Summary

The experiments which were carried on in order to increase the nutritive value of the straw, by means of yeastification (inoculation by yeasts), have shown the following advantages.

1. The yeast content of the feeds are greatly increased as a result of which the carbohydrates are undergoing to an intensive fermentation process, which in its turn makes the fe-

eds more digestible and gives them a peculiar aromatic odor and taste.

2. The vitamine contents of the feeds are increased.

3. As a result of yeast and bacterial activities, the cel-lulose of the feeds are hydrolyzed and less digestible mate-rials are converted in easily digested materials. Therefore the nitrogen free-extracts of the feeds are decreased, while the digestible proteins are increased.